Co-funded by the
Tempus Programme
of the European Union

ARARAT

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

ԱՐԱՐԱՏ

«Համալսարան-գործատու»
հայկական համակարգող գործակալություն

www.ararattempus.org

With the support of the Tempus Programme of the European Union

«Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
2016

Co-funded by the
Tempus Programme
of the European Union

Այս ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության օգտագործման համար:

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս փաստաթուղթը ներկայացնում է ՏԵՄՊՈՒՍԻ ԱՐԱՐԱՏ («Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն) ծրագրի շրջանակներում մշակված Ծրագրային համակարգերի ճարտարագիտության Ոլորտային որակավորումների ազգային շրջանակը (ՈՈԱՇ):

ՈՈԱՇ-ի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներով:

1. Որակավորումների վերաբերյալ կարծիքի ներառում որակավորումների պահանջներում:

ՀՀ-ն մշակել է Որակավումների ազգային շրջանակը (ՈԱՇ) և այժմ գտնվում է բուհական կրթությունը ՈԱՇ-ի պահանջներին համապատասխանացնելու փուլում: Որակավորումների ոլորտային շրջանակի մշակումը, որը կնկարագրի ՀՀ-ում Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ոլորտում աշխատաշուկայի կարիքները, հիմքեր կստեղծի համակարգի կառուցման համար: ՈԱՇ-ի պահանջները, որպես ուղենիշ ունենալով և դրանք արտահայտելով ոլորտին հատուկ պահանջների տեսքով, ՈՈԱՇ-ը օգտակար և կողմնորոշիչ գործիք կդառնա ուսումնական հաստատությունների և գործատուների միջև երկխոսություն ստեղծելու համար: ՈՈԱՇ-ը կօգնի ուսումնական հաստատություններին ավելի արդյունավետ կազմակերպել կրթությունը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն տրամադրել:

2. Գործատուի և կրթության միջև միասնական լեզվական դաշտի ձևավորում

Աշխատելով տարբեր համատեքստերում՝ գործատուն և կրթությունը շատ հաճախ սկսում են խոսել իրար համար անհասկանալի լեզվով: Այստեղ խոսքը գնում է բառերի և դրանց իմաստի

ընկալման տարբերությունների մասին: ՈՈԱԾ-ը պետք է թույլ տա երկու կողմերին հաղթահարել այդ դժվարությունը և խոսել միմյանց հասկանալի հասկացություններով:

3. Որակավորումների ճանաչում՝ ազգային և միջազգային մակարդակներում

Բոլոնյան հռչակագրի կարևոր ուղղություններից մեկը վերաբերում է որակավորումների փոխճանաչման խնդրին: Զևավորվող գլոբալ կրթական ցանցի և աշխատաշուկայի պայմաններում այս խնդիրը չի կորցնում իր արդիականությունը: ՈՈԱԾ-ի ներդրումը մեծ դեր ունի նաև ՀՀ-ում հավատարմագրման գործընթացի կազմակերպման ժամանակ՝ ուղղորդելով արտաքին գնահատման փորձագետներին գործընթացի բարելավմանը միտված փաստերի բացահայտմանը և դասավանդման գործընթացը հայկական իրականության համատեքստին համապատասխանեցնելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրմանը:

Հաճախ գրավիչ է թվում օգտագործել լավ մշակված և լայն տարածում գտած լավագույն փորձը: Սակայն, իրականացման ժամանակ մի շարք յուրահատկություններ պետք է հաշվի առնվեն, որոնք կախված են ազգային աշխատաշուկայի պահանջներից, ավանդույթներից ու առկա ռեսուրսներից:

ՈՈԱԾ-ը նախատեսված չէ փոխարինելու կրթական ծրագրերի հայտնի չափորոշիչները և ոլորտում ուսումնական պլանների մշակման ուղենիշները: Այնուամենայնիվ, այն արձագանքում է Ծրագրային համակարգերի ճատարագիտական կրթության մեջ առկա բացերին, որոնք դուրս են բերվել ազգային գործատուների հետ հարցազրույցների և քննարկումների ընթացքում: Այսպիսով, Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ՈՈԱԾ-ը հանդիսանում է կրթության հիմնական շահագրգիռ կողմերի՝ գործատուի և ակադեմիական դաշտի հետազոտության արդյունքը:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՔԱՅԼԵՐԸ

Հետազոտության նպատակն է մշակել Ծրագրային համակարգերի ճարտարագիտություն ոլորտի որակավորումների համապարփակ և ամբողջական նկարագրություն, որը հասկանալի կլինի ինչպես կրթական դաշտի, այնպես էլ գործատուների համար: Ընդ որում, շրջանակը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որը հետագայում կդյուրացնի դրա վերանայման գործընթացը:

Նշված նպատակին հասնելու համար կատարվել են հետևյալ քայլերը՝

1. Գրականության վերլուծություն
2. Հետազոտական շրջանակի սահմանում
3. Հարցում գործատուների, դասախոսների, ուսանողների և շրջանավարտների շրջանում
4. Ֆոկուս խմբեր գործատուների հետ
5. Արդյունքների ընդհանրացում և վերլուծություն

Գրականության վերլուծության արդյունքում հստակեցվել են կրթության և աշխատաշուկայի միջև առկա հիմնական խնդիրները, սահմանվել է շրջանակի կառուցվածքը և հետազոտության մեթոդաբանությունը: Դրանք անցել են քննարկման փուլով, որին մասնակցել է ոլորտի մասնագետների լայն շրջանակ: Համաձայնեցվել և քննարկվել են հետազոտության բոլոր վերոնշյալ բաղադրիչները:

Մեթոդական մասը հստակեցնելուց հետո սահմանվել է աշխատանքների ժամանակացույց և ձևավորել է դաշտային հետազոտություններ իրականացնող խումբ: Դրանում ընդգրկվել են՝ 1 ոլորտի մասնագետ, 1 մեթոդական մասնագետ (ֆոկուս խմբերի և հարցումների մեթոդաբանության իմացությամբ), 2 կրթության ոլորտի մասնագետներ:

Հետազոտության հաջորդ փուլը հարցաշարի իրականացումն է

ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների շրջանում: Հարցաշարերը ուղարկվել է համապատասխան ռեսպոնդենտներին և ենթարկվել են քանակական վերլուծության:

Ըստ սահմանված ժամանակացույցի հանդիպումներ են տեղի ունեցել Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ոլորտի գործատուների հետ, որոնց ընթացքում հավաքագրվել է տեղեկատվություն՝ համաձայն նախապես սահմանված հետազոտական շրջանակի: Հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվել է և արվել են համապատասխան հետևություններ:

Հաջորդ բաժիններում կանդրադառնանք վերևում բերված քայլերի արդյունքներին:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

ՈՈԱԾ-ի մշակման համար առաջարկվող մոդելը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- Ապրանքի նկարագրություն
- Ապրանքի կամ ծառայության կենսափուլ
  - o Կոմպետենցիաներ
  - o Հմտություններ
- Մասնագիտական մտածողություն
- Գիտելիքի մարմին (BOK)

Ոլորտին հատուկ ապրանքի նկարագրությունը անհրաժեշտ է, որպեսզի շրջանակը ամբողջական պատկերացում տա մասնագետի գործունեության նպատակի մասին: Այն թույլ է տալիս վերացական նկարագրությունները դիտարկել շատ հստակ, բոլորի կողմից հասկանալի, հաճախ նաև շոշափելի առարկաների համատեքստում: Ստացվում է, որ ապրանքի նկարագրությունը շրջանակը օգագործողին թույլ է տալիս ավելի հստակ պատկերացում ունենալ ոլորտում

գործունեություն ծավալող մասնագետի առարկայական նպատակների մասին, իսկ կրթության ընթացքում հանձնարարությունները ձևակերպել այդ կոնտեքստում:

Ոլորտի ապրանքի համատեքստային մոտեցումը արդյունավետ է նաև գործատուների հետ հանդիպումների ընթացքում: Այդ արդյունավետությունը կայանում է հետևյալում: ԵՈՇ-ից ավելի ցածր կանգնած շրջանակներ ժառանգվող հիմնական հատկություններն են՝ ինքնուրույնությունը և համատեքստի բարդությունը: Հետևաբար գործատուների հետ երկխոսության ժամանակ հարկ է պարզել այդ հատկությունների որոշ առանձնահատկություններ: Սակայն գործատուներին դժվար է մտածել այդ հասկացությունների սահմաններում: Փոխարենը, նրանք շատ լավ պատկերացնում են իրենց կողմից արտադրվող ապրանքը: Հենց ապրանքի միջոցով է հնարավոր լինում դուրս բերել ինքնուրույնության և բարդության ցուցանիշները:

ՈՈԱՇ-ը ըստ էության կապող օղակ է աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև: Այդ կամուրջի ձևավորման նպատակով անհրաժեշտ է աշխատանքային միջավայրի հատկանիշները տեղափոխել դեպի կրթական միջավայր: Այդ նպատակով կիրառվում է ապրանքի կենսափուլը: Այն թույլ է տալիս ապահովել ոչ միայն աշխատանքային միջավայրի տեղափոխություն այլ նաև հնարավորություն է տալիս գործատուի խոսքը և մոտեցումը բերել կրթություն: Ընդ որում դա անել՝ ընդգրկելով տեխնոլոգիական ողջ ցիկլը: Ներկայիս պայմաններում, երբ պետությունը գնալով ավելի պասիվ դեր է վերցնում, կրթական պատվերի իմաստով, նման մոդելը խիստ արդյունավետ է դառնում: Միաժամանակ կրթական հաստատությունը իր արածի մասին կարծիք հարցնելուց կկարողանա պրակտիկ կողմը ցույց տալ արդեն գործատուի համատեքստում և արձագանքը առավել նպատակային կարող է լինել:

Մյուս կողմից բացարձակ աշխատաշուկայի տերմիններով և

լեզվով խոսելու դեպքում կա վտանգ, որ կրթությունը ամբողջությամբ չի ընկալի շուկայի պատվերը: Ավելին, ՈՈԱԾ-ը ի սկզբանե մտածված է եղել հենց այդ հաղորդակցական արգելքը հաղթահարելու համար: Հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի շրջանակը ներառի կրթական դաշտի համար հասկանալի բաղադրիչ:

Հենց այս խնդիրը լուծելու նպատակով շրջանակում ներառվել է ոլորտին հատուկ «գիտելիքի մարմին»: Կրթության խնդիրը կդառնա ուղղորդել՝ արդեն դասական դարձած գիտելիքը, բովանդակությունը դեպի աշխատաշուկայի պահանջներ: Այդ իմաստով հարկ է ուշադրություն դարձնել գնահատման և դասավանդման մեթոդների վրա, որոնք առավելագույնս պետք է մոտեցնել աշխատանքային պայմաններին: Սա նշանակում է, որ կախված կրթական ծրագրի պահանջներից և առանձնահատկություններից անհրաժեշտ է գնահատումը և հանձնարարությունները պլանավորել ապրանքի և դրա շրջափուլի համատեքստում: Մոտեցնել կրթական ծրագիրը դրանց առանձնահատկություններին:

Մասնագիտական մտածողությունը այս մոդելում հանդես է գալիս, որպես մասնագիտական խնդիրներ լուծելու գրավական: Այն ոլորտի մասնագետի ներքին՝ մտավոր վարքն է: Դրանով են տարբեր ոլորտների մասնագետները տարբերվում խնդիրներ լուծելու մոտեցումներում: Նկարագրված մոդելը դյուրացնում է նաև ոլորտային հետազոտությունների գործընթացը: Այն թույլ է տալիս ոլորտային հետազոտություններ իրականացնելիս հստակ բաժանում կատարել գաղափարական կոնստրուկտների մեջ: Օրինակ՝ հարցաշարեր մշակելիս հարցեր տալ միայն ապրանքի կենսափուլերից մեկի մասին: Այն ավելի է հեշտացնում մեթոդաբանության և գործիքների մշակումը և ապահովում է հավաստի արդյունքներով: Այսպիսով, ներկայացված մոդելը հանդես է գալիս, որպես ոլորտի բոլոր էական առանձնահատկությունները ընդգրկող, ամբողջական մոդել:

Առաջարկվող շրջանակը իրենից ներկայացնում է 2 մակարդակի

շրջանակների համադրություն ՈԱԾ-ի և ՈՈԱԾ-ի: Ոլորտային շրջանակը (ՈՈԱԾ) բաղկացած է երկու մասից: Առաջինը ունակությունների նկարագրությունն է, իսկ երկրորդը՝ ապրանքի կենսափուլի համար անհրաժեշտ կոմպետենցիաների նկարագրությունը: Անդրադառնանք դրանց առանձին- առանձին:

Ապրանքի կենսափուլի բաղադրիչները ունեն բնային դիզայն և ձևավորվում են ամբողջականության և օպերացիոնալիզացիայի սկզբունքով: Սա նշանակում է, որ ոլորտին վերաբերող կոմպետենցիաների ամբողջությունը դասակարգված է ըստ ապրանքի ստեղծման կենսափուլի: Այդ փուլերը թույլ են տալիս ապահովել, որ ոլորտին բնորոշ բոլոր անհրաժեշտ կոմպետենցիաները ներկայացված կլինեն շրջանակի նկարագրության մեջ: Սա ամբողջականության սկզբունքն է, որի պահպանումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ ապրանքի ստեղծման կենսափուլը արտացոլում է աշխատաշուկայի իրական գործընթացները, հետևաբար ավելի է մոտեցնում շրջանակը գործնական կյանքին:

Բացի դա յուրաքանչյուր առանձին փուլի համար նկարագրված են այն բոլոր կոմպետենցիաները, որոնք անհրաժեշտ են այդ փուլի իրագործման համար: Յուրաքանչյուր կոմպետենցիայի համար ներկայացված է դրան համապատասխան հմտությունների շարքը, որը թույլ է տալիս ձևավորել կոմպետենցիան: Այս կառուցվածքի միջոցով պահպանվում է օպերացիոնալիզացիայի սկզբունքը և ավելի վերացական կառույցները ներկայացվում են հասկանալի և համեմատաբար ավելի չափելի միավորների տեսքով:

Ոլորտի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար հարկ է սահմանել այդ ոլորտին հատուկ ապրանքները: Ապրանքը, դա այն հիմնական արդյունքն է, որը ստացվում է գործընթացների արդյունքում:

Գծատկեր 1.



4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին քայլով իրականացվել է դաշտի փաստաթղթային հենքի ուսումնասիրություն, որը նպատակ ուներ պարզելու Ծրագրային համակարգերի ճարտարագիտություն ոլորտի ներկայիս վիճակը և պահանջները:

Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ոլորտի ապրանքների մասնագիտական տերմինաբանական բառարանը և սահմանումները ներկայացված են IEEE[1] փաստաթղթում: Կան բազմաթիվ ոչ ֆորմալ մոտեցումներ, որոնք անուղղակիորեն նկարագրում են Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ապրանքների առանձնահատուկ հատկանիշները, ինչպես նաև դրանց մշակման և օգտագործման ձևերը:

Ծրագրային համակարգերի ճարտարագիտության համակարգչային գիտության ձեռքբերումների օգտագործումն է ճարտարագիտական համատեքստում՝ ելնելով ծրագրերի մշակման և պահպանման

[1] Աղբյուրը՝ https://www.ieee.org/

կարիքից: Համակարգչային գիտությունը հանդիսանում է ոլորտի մասնագիտական մտածողությունն ու արժեքները: Այն հանդիսանում է ոլորտի մասնագիտական մտածողության գիտական հիմքը: Մասնագիտական մտածողությունը ներկայացված է համակարգչային գիտության կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներում: Կրթական ծրագրերը ներառում են երկու տեսակի մտածողություն՝ ալգորիթմական մտածողություն և ճարտարագիտական մոտեցում: Համակարգչային գիտությունը գիտելիք և հմտություններ է տալիս ծրագրավորման աշխատանքի համար:

Ճարտարագիտական մոտեցումն իրականացվում է ապրանքի շրջափուլի էլեմենտների նկարագրության ձևով: Լավ հայտնի պրակտիկ մոտեցումներն են՝ CDIO[1] և e-competence[2]:

Գիտելիքի մարմինը այլ ձևով է ներկայացված (SE2014[3], Computing07[4], CS2013[5]):

Ոլորտի իրավիճակի ուսունասիրությունը բավարար հիմք է տալիս լայն համատեքստում ՈՈԱԾ-ի նկարագրման համար: Համատեքստի ուսումնասիրության արդյունքը մոդելի էլեմենտների և սեկտորի իրավիճակի դուրս բերումն է: ՈՈԱԾ-ի կարևոր փոխլրացնող էլեմենտը ազգային կարիքների ուսումնասիրությունն է, որը

[1] Crawley, E.F., Malmqvist, J., Östlund, S., Brodeur, D.R., Edström, K. Rethinking Engineering Education The CDIO Approach, 2014.

[2] Աղբյուրը՝ http://www.ecompetences.eu/

[3] Software Engineering 2014, Curriculum Guidelines for Undergraduate Degree Programs in Software Engineering, A Volume of the Computing Curricula Series, 23 February 2015, Joint Task Force on Computing Curricula IEEE Computer Society Association for Computing Machinery

[4] "Computing 2007" © The Quality Assurance Agency for Higher Education 2007, <www.qaa.ac.uk>

[5] Computer Science Curricula 2013, Curriculum Guidelines for Undergraduate Degree Programs in Computer Science

December 20, 2013, The Joint Task Force on Computing Curricula Association for Computing Machinery (ACM) IEEE Computer Society

ամբողջացնում է ՈՈԱԾ-ի նկարագրությունը: Ազգային կարիքների ուսումնասիրությունը և գործատուների կարիքների վերհանումը կատարվել է ոլորտին հատուկ բառապաշարի օգտագործմամբ:

Հավելված 3-ում ներկայացված են գրականության վերլուծության արդյունքում դուրսբերված ոլորտին վերաբերող սահմանումները և նկարագրությունները:

5. ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՈԱԾ մշակման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու նպատակով իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ ՏՏ ոլորտի գործատուների հետ: Գործատուի հետ հաղորդակցումն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար օգտագործվել է մշակված ՈԱԾ կառուցվածքը ուղղորդելու քննարկումները:

Ֆոկուս խմբային քննարկումները ուղղված էին բացահայտելու՝

1. Ո՞րոնք են մասնագիտությանը բնորոշ ապրանքները և որոնք են դրանց յուրահատուկ պահանջները
2. Որո՞նք են այն կոմպետենցիաները և հմտությունները, որոնք նպաստում են ապրանքի յուրաքանչյուր կենսափուլի ընթացքում բնորոշ խնդիրների իրականացմանը:
3. Ինչպիսի՞ մտածելակերպ է բնորոշ ոլորտի մասնագետին մասնագիտական խնդիրներ լուծելու ընթացքում:

ՈԱԾ մշակման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու նպատակով իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ ՏՏ ոլորտի գործատուների հետ: Գործատուի հետ հաղորդակցումն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար օգտագործվել է մշակված ՈԱԾ կառուցվածքը ուղղորդելու քննարկումները:

Ֆոկուս խմբային քննարկումները ուղղված էին բացահայտելու՝

1. Ո՞րոնք են մասնագիտությանը բնորոշ ապրանքները և որոնք

են դրանց յուրահատուկ պահանջները

2. Որո՞նք են այն կոմպետենցիաները և հմտությունները, որոնք նպաստում են ապրանքի յուրաքանչյուր կենսափուլի ընթացքում բնորոշ խնդիրների իրականացմանը:
3. Ինչպիսի՞ մտածելակերպ է բնորոշ ոլորտի մասնագետին մասնագիտական խնդիրներ լուծելու ընթացքում:
4. Ինչպիսի՞ գիտելիք է անհրաժեշտ ոլորտի մասնագետին մասնագիտական խնդիրներ լուծելու ընթացքում:

Հավելված 2-ում ներկայացված է քննարկումների վարման ուղեցույցը: Այսպիսով հավաքագրված տվյալները հետազոտական խումբը ներառել է ՈՈԱԾ-ի շրջանակում:

Հետազոտության նպատակներով իրականացվել են 6 ֆոկուս խումբ քննարկումներ ոլորտի գործատուների հետ: 30 ներկայացուցիչ 12 SS ընկերություններից մասնակցել են քննարկումներին: Ընկերությունները տարբերվում են չափերով (աշխատակիցների թիվ) և ոլորտներով (ապրանքների տեսակ): Մասնակից կազմակերպությունները Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ոլորտում բավականին ակտիվ են, ունեն ազգային և միջազգային աշխատաշուկայում ներգրավվածության փորձ, ինչպես նաև ապրանքների բազմազանություն: Ընկերությունների ցանկը, որոնք մասնակցել են քննարկմանը ներկայացված է Հավելված 3-ում:

Առաջին հանդիպումներն ու հարցազրույցները եղել են ՀՀ-ում Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ոլորտի գլխավոր գործադիր տնօրենների հետ: Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը հրավիրել էր մի շարք կազմակերպությունների՝ մասնակցելու ֆոկուս խմբային քննարկմանը:

Նախնական արդյունքները ցույց տվեցին, որ ՀԱԱՑ-ի հետազոտող խումբը զգալի տվյալներ է դուրս բերել, որոնք վերաբերում են ազգային աշխատաշուկային հատուկ ապրանքների և ոլորտի ընդհանուր կարքիներին: Հանդիպումների ժամանակ քննարկվեց

նաև, որ անհրաժեշտ է պետական կառույցների ուշադրությունը սևեռել շրջանավարտների որակի, բակալավրի և մագիստրոսի մակարդակների համար ընդհանրական պահանջների վրա:

Հետևելով սահմանված պլանին, հետազոտող խումբը մի շարք հանդիպումներ ունեցավ կազմակերպությունների գլխավոր տեխնիկական պատասխանատուների հետ (CTO) ՈՈԱԾ-ի խնդիրների վերաբերյալ: Քննարկումները հիմնված էին այն տվյալների վրա, որոնք դուրս էին բերվել կազմակերպությունների տնօրենների հետ նախնական զրույցների արդյունքնում:

Իրականացված ֆոկուս խմբերը մոդերացվում էին ՈԱԾ մշակման խմբի ղեկավարի կողմից, ով ունի ոլորտում դասավանդման, աշխատանքային փորձ և գիտելիք որակի ապահովման գործընթացների վերաբերյալ և կարող է պահպանել գործատուի հետ նույն լեզուն և ներկայացնել տեղեկատվությունը ճիշտ համատեքստում:

Ֆոկուս խմբերի միջին տևողությունը 1,5 ժամ էր: ՈԱԾ մոդելի գրաֆիկական պատկերը և նկարագրությունը ներկայացվեցին մասնակիցներին օգնելու գործատուներին առավել արագ ընկալել կառուցվածքի առանձնահատկությունները: Նշումները արվում էին մոդերատորի օգնականի կողմից: Ֆոկուս խումբը արձանագրվում էր հատուկ սարքով, որը հնարավորություն է տալիս իրականացնել վիդեո և աուդիո ձայնագրումներ: Այն լավ փորձի օրինակ է ծառայում գործատուների հետ հաղորդակցումը մշտապես ակտիվ պահելու և գործատուի մտահոգությունները հասկանալու համար: Ուսանողների համար վիդեո նյութերը հնարավարություն կտան հասկանալ ապագա աշխատանքային միջավայրը: Այս խոսակցությունները ուսանողների մոտ կապահովեն մասնագիտական շարժառիթ և հնարավորություն կտան գիտակցել ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումները: Նյութերը նաև կօգնեն առարկաների ընտրության վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ:

ՈԱԾ-ի միջոցով կառուցված երկխոսությունը առավել արդյունավետ էր ՈՈԱԾ-ի մշակման համար, քանի որ այն հասկանալի էր

գործատուին, ի տարբերություն գործատուի հետ կրթական ծրագրի լեզվով հաղորդակցվելուն: Գործատուն ծանոթ է իր ապրանքի, ապրանքի շրջափուլի, իր աշխատակիցների ունակությունների, իրենց արժեքների/մտածողության հետ և շահագրգռված է առավել արդյունավետորեն ներկայացնելու իր աշխատանքին առնչվող հմտությունները: Այն նաև արդյունավետ է ստացված գիտելիքի մարմնի գնահատման և անհրաժեշտ նյութի ընտրության առումով: Այստեղ մասնակիցները հանդես են գալիս ինչպես որպես շրջանավարտ, այնպես էլ գործատու: ՈԱՇ-ը թույլ է տալիս ստեղծել միասնական լեզու գործատուների և բուհի միջև՝ սահմանելով համապատասխան պահանջներ:

Ֆոկուս խմբային քննարկումները ընդգծում են աշխատաշուկայում ակտիվ դերակատարների կողմից մատնանշված ուժեղ և թույլ կողմերը, անհրաժեշտ որակները և պրակտիկ աշխատանքի առաջին քայլերն անելու ժամանակ դուրս բերված բացերը և այն բացերը, որոնք ավելի կայուն են և դրանց բարելավումը պահանջում է հատուկ ջանքեր, քանի որ դրանք գալիս են կրթություն ստանալու առաջին փուլերից:

Այսպիսով, ծրագրի նախաձեռնությունը տալիս է ուսումնական պլանների շարունակական զարգացման և բարելավման մեխանիզմ, ինչպես նաև հնարավորություն երկրի ներսում դուրս բերել լավագույն փորձը՝ հաղորդակցվելով գործատուների, շրջանավարտների, ուսանողների և դասախոսների հետ՝ օգտագործելով ՈՈԱՇ-ի մեթոդաբանության մեջ առաջարկվող շրջանակը:

Գործատուների համար այս հետազոտությունը օգտակար է, քանի այն կողմնորոշիչ գործիք է հանդիսանում շուկայի կարիքների համար և ուղղորդում է, թե ինչպես հաղթահարել հնարավոր խոչընդոտները, երբ աշխատանքի են վերցնում ազգային բուհերի շրջանավարտների կամ նրանց ներառում են միջազգային խմբերում:

Մոդելի արդյունավետությունը հաստատեց նաև հարցազրույցների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունն ու տվյալները:

Ապրանք

Մասնակից գործատուները տվեցին առաջարկվող ապրանքների տարբեր դասակարգումներ (ապրանք/լուծում/ծառայություն, ծրագրեր/ծառայություններ, ցանց/ամպ/բջջային համակարգեր և այլն): Ապրանքի վերաբերյալ նրանք առանձնացրեցին առարկայական ոլորտի իմացության անհրաժեշտությունը: Կախված ապրանքի առանձնահատուկ պահանջներից (ճկուն, ձևափոխման ենթակա) աշխատակիցների հմտություններին առաջադրվող պահանջները տարբեր են:

Ապրանքի կենսափուլ

Գործատուները ընդգծել են ուսանողների շրջանում նախագծի կենսափուլի վերաբերյալ գիտելիքների կարևորությունը: Այս գիտելիքները նրանք պետք է փոխանցվեն կրթական ծրագրի սկզբում՝ ձևավորելու հատուկ մտածելակերպ/արժեհամակարգ: Խմբային առաջադրանքները կօգնեն յուրացնել ծրագրի կենսափուլը:

Մտածողություն

Քննարկումների առանցքը հանդիսանում էր մասնագիտական մտածողությունը: Գործատուները նշել են ալգորիթմական մտածողությունը, համակարգային մտածողությունը (համակարգը մասնատելու ունակություն), կոմբինատոր մտածողությունը որպես շրջանավարտների համար անհրաժեշտ: Համաձայն գործատուների արդյունքի թեստավորումը պարտադիր է մշակման բոլոր փուլերում, ըստ այդմ, ուսանողները պետք է հասկանան և արժևորեն այն: Թեստավորումը կարող է նաև հանդիսանալ ուսանողների գնահատման էական բաղկացուցիչ:

Ինքնուրույնություն

Գործատուները բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի տարբերությունը տեսնում են նրանում, որ երկրորդը

պետք է ավելի կենտրոնանա նախագծերի վրա ձևավորելու ինքնուրույնություն ուսանողների շրջանում:

Ընդհանրական հմտություններ

Մասնակիցները նաև նշեցին շրջանավարտների ընդհանրական հմտությունների պակասը՝ հատկապես ընդգծելով հաղորդակցվելու, հետազոտելու, գրելու, ներկայացնելու և զեկուցելու հմտությունները: Բոլոր գործատուները շեշտեցին սովորել թե ինչպես սովորել կարողությունը որպես պահանջվող:

Թիմային աշխատանք

Գործատուները համաձայնության եկան աշխատավայրում թիմային աշխատանքի կարևորության վերաբերյալ, որը պետք է սերմանվի ուսանողների մոտ խմբային աշխատանքների միջոցով, ներառյալ ծրագրային համակարգերի ստուգում (software debugging), գործընկերային նախագծում/ծրագրավորում (peer development/programming), ծրագրի վերանայում (code review) և այլն: Նրանք նաև առաջարկեցին ներառել նման առաջադրանքներ կրթական ծրագրի մեջ և գնահատումն իրականացնել ուսանողի առաջընթացի հիման վրա:

Նախագծեր

Բոլոր գործատուները նշեցին, որ նախագծերը պետք է ներառվեն կրթական ծրագրում սկսած առաջին տարվանից: Այստեղ հիմնական նպատակը աշխատանքային համատեսքտի ներդրումն է ուսումնական գործընթացում՝ տեսական գիտելիքները կիրառական հմտությունների վերածելու և տարբեր առարկաները միմյանց կապելու նպատակով: Գործատուի հետ ուղղակի հաղորդակցությունը նշվել էր որպես մոտիվացիոն գործիք ուսանողների համար (ամառային դպրոցներ, պրակտիկա):

Գնահատում

Բացի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գի-

տելիք տրմադրելու անհրաժեշտությունից, գործատուները նաև նշեցին, որ գնահատումը պետք է տեղի ունենա աշխատանքային պայմաններին մոտեցված, նույնիսկ իրականացվի գործատուի կողմից: Հետևաբար, պահանջվող գիտելիքի և հմտությունների մասին տեղեկատվությունը կարող է օգտագործվել գնահատման գործիքների մշակման գործընթացում:

Գիտելիքի մարմին

Պահանջվող գիտելիքի մարմնի վերաբերյալ գործատուները համաձայնեցին ֆունդամենտալ առարկաների (տվյալների բազաներ, ալգորիթմերի տեսություն, դիսկրետ մաթեմատիկա, տվյալների կառուցվածք, հավանականության տեսություն) և առնվազն մեկ ծրագրավորման լեզվի լիարժեք իմացության անհրաժեշտության շուրջ:

Միջդիսցիպլանարություն

Գործատուները նաև անդրադարձան տարբեր մասնագիտական կրթական ծրագրերի միջև կապի պակասին, որը, համաձայն քննարկումների մասնակիցների, նույնպես կարող է հաղթահարվել նախագծերի միջոցով: Տարբեր նպատակներին ծառայող նախագծերը սկսած ուսումնառության սկզբից կնպաստեն ուսանողների ինքնուրույնության, պատասխանատվության և կոնտեքստի բարդությանը ադապտացվելու ունակությունների զարգացմանը:

Աշխատանքային ստանդարտներ

Մասնակիցները քննարկեցին ուսանողների՝ աշխատանքային գործընթացի այլ ասպեկտների իմացության անհրաժեշտությունը, ինչպիսիք են կոդավորման ոճերը, նոր տեխնոլոգիաների կիրառումը, կորպորատիվ էթիկան և այլն:

Հարցազրույցների այս ձևաչափը արդյունավետ էր նաև դասախոսների համար: Այն համատեքստի վերաբերյալ տվյալներ ապահովեց, ինչը կարևոր հանգամանք է ուսանողների գնահատման

ժամանակ և օգնում է դասախոսներին պահել ապագա աշխատատեղի համատեքստի համապատասխանությունը:

Ինչպես նախկինում նշվեց, հետազոտող խումբը որոշեց հիմնական մեթոդաբանության մեջ պահել Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ոլորտի որակավորումների շրջանակի հիմնական նկարագրիչները միջազգային տեսանկյունից, միևնույն ժամանակ ազգային գործատուներին ներկայացրեց այդ նկարագրիչների մեկնաբանությունները: Դասախոսները, ովքեր պետք է ուսումնական պլաններում իրականացնեն նախատեսված ՈՈԱՇ-ը, պետք է օգտագործեն այդ մեկնաբանությունները՝ աշխատատեղի կոնտքեստը պրակտիկ գնահատման մեջ փոխակերպելու համար:

Դասախոսը կարող է փոխակերպել աշխատատեղի հանձնարարությունների մանրամասները գնահատման պահանջներում՝ առավել գործնական դարձնելու և ուսանողին գործատուի համատեքստին ծանոթացնելու համար:

Գիտելիքի մարմին, ազգային դաշտ: Ծրագրային ապահովման ճարտարագիտության ոլորտի որակավորումների շրջանակի մոդելի մշակման հաջորդ քայլը մոդելում ուսումնական պլանի էլեմենտների ներառումն է:

Հարցազրույցների ժամանակ շրջանավարտները շեշտադրել են այն հիմնական առարկաները, որոնք գործատուին կապահովեն անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Բուհերն օգտագործում են ուսումնական պլաններ, որոնք գալիս են կիրառական մաթեմատիկայի կրթական չափորոշչից մշակված դեռևս սովետական ժամանակներում և վերանայված ՀՀ-ում 90-ներին և հիմնականում պահպանում են նմանությունները:

Միայն որոշ փոփոխություններ են եղել մի քանի կրթական ծրագրերում: ՀԱԱՅ-ի խումբը կարող է հաստատել, որ Ծրագրային համակարգերի ճարտարագիտության ուսումնական պլանը մինչ այսօր որոշ բաղադրիչներով համարվում է ամենազարգացածն ու

արդյունավետը: Հարգելով վերոնշյալը, հետազոտող խումբը նշում է նաև, որ Ծրագրային ապահովման ճարտարագիտություն ոլորտի պրակտիկ համատեքստը փոխվել է, հետևաբար արմատապես փոխվել է նաև գործատուի պրոֆիլը: Այժմ մոտեցումները այլ են: Գործատուները ընդունում են դասական առարկաները, օրինակ՝ գրաֆերի տեսություն (graph theory), տվյալների կառուցվածք (data structures), ալգորիթմների տեսություն (theory of algorithms), օպերացիոն համակարգեր (operating systems) և այլն: Սակայն միևնույն ժամանակ գործատուները մտահոգություն ունեն դասավանդման այն մոտեցումների վերաբերյալ, որոնցով ուսուցանվում են առարկաները: Համակարգչային համակարգերը շատ են փոխվել, իսկ նոր դաշտը չի համապատասխանում գոյություն ունեցող ուսումնական պլանին: Գործատուների ներգրավվածության անհրաժեշտությունը ըստ այդմ խիստ կարևոր է:

5. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

ՈԱԾ-ի մշակման շրջանակներում իրականացվել են հարցումներ ոլորտի շահակիցների հետ ներառյալ գործատուներ, շրջանավարտներ, ուսանողներ և դասախոսներ պարզելու նրանց գնահատանակը մի շարք ընդհանրական և առարկայական հմտությունների և կարողությունների պահանջարկի վերաբերյալ: Համալսարան-աշխատաշուկա ազգային ցանցը իրականացրեց տվյալների հավաքագրման գործընթացը ծրագրի մասնակից բուհերի շրջանում:

Հարցաշարը կազմված է երկու բաժնից: Առաջինը ներառում է 18 ընդհանրական հմտություն և կարողություն: Երկրորդ բաժինը ներառում է առարկայական հմտություններ և կարողություններ խմբավորված ըստ ապրանքի յուրաքանչյուր կենսափուլի՝ մտահղացում, նախագծում, իրականացում, գործառնություն: Հարցվողները, երբ կիրառելի է, գնահատել են յուրաքանչյուր հմտություն 5 բալանոց սանդղակով (1-շատ քիչ, 2-քիչ, 3-որոշ չափով, 4-շատ,

5-առավելագույնս) ըստ հետևյալ չափանիշների.

- Անհրաժեշտություն
- Ձեռք է բերվել բուհում
- Ձեռք է բերվել աշխատելու ընթացքում
- Ես կարող եմ կատարել դա հետևյալ չափով:

Հարցումն իրականացվել է 4 մասնակից բուհերի SS մասնագիտությունների ուսանողների, շրջանավարտների պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում: Ներառված են եղել հետևյալ մասնագիտությունները յուրաքանչյուր բուհից:

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Վանաձորի մասնաճյուղ
   - Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա (բակալավր)
2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
   - Տեղեկատվական տեխնոլոգիաներ
   - Տեղեկատվական անվտանգություն
   - Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
   - Համակարգչային գեղարվեստական նախագծում
   - Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
3. Գավառի պետական համալսարան
   - Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա (բակալավր)
4. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան
   - Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա (բակալավր)
   - Համակարգային ծրագրավորում (մագիստրատուրա)
   - Մաթեմատիկական մոդելավորում (մագիստրատուրա)

ՀԱԱՑ առցանց պլատֆորմի միջոցով իրականացված հարցումներին մասնակցել են 81 ուսանող, 45 շրջանավարտ, 28 դասախոս և 20 գործատու: Ստորև աղյուսակներում ներկայացնում են հարցումների արդյունքները:

5.1 ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1.1 Գործատուներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Չեռք է բերվել բուհում	Չեռք է բերվել աշխատելու ընթացքում	Դրագրի բացը[1]
	Միջին գնահատականը			Միջին տարբերությունը
Փորձարկելու և նորարարական հմտություններ	4.9	3.0	3.8	1.9
Ստեղծագործ մտածելու ունակություն	4.7	3.0	3.9	1.7
Կոնֆլիկտի լուծում	4.6	2.7	3.4	1.9
Գաղափարները արդյունավետ փոխանցելու ունակություն	4.6	2.2	3.1	2.4
Բանավոր հաղորդակցություն	4.5	2.8	3.6	1.7
Բանակցային հմտություններ	4.5	2.4	3.3	2.1
Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն	4.4	3.3	4.3	1.2
Տեսությունը գործնականում կիրառելու ունակություն	4.4	2.4	4.1	2.1
Սովորել, թե ինչպես սովորել	4.4	3.1	3.5	1.3

[1] “Անհրաժեշտություն” և “Չեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Ժամանակի և ռեսուրսների կառավարում	4.4	2.3	3.7	2.1
Մասնագիտական էթիկա	4.3	2.1	3.6	2.2
Թիմային աշխատանք և միջառարկայական թիմում աշխատելու ունակություն	4.3	2.9	4.0	1.4
Օտար լեզուների իմացություն	4.3	3.5	3.3	0.8
Գրավոր հաղորդակցություն	4.3	3.0	3.8	1.3
Ուրիշներին սովորեցնելու ունակություն	4.2	2.6	3.5	1.7
Ցանցեր ստեղծելու ունակություն	4.1	2.3	3.0	1.8
Առաջնորդում և ձեռնարկատիրական կարողություն	4.0	2.1	3.2	1.9

5.1.2 Դասախոսներ

Հմտություններ և կարողություններ	**Անհրաժեշտություն**	**Ձեռք է բերվել բուհում**	**Ծրագրի բացը[1]**
	Միջին գնահատականը		**Միջին տարբերությունը**
Տեսությունը գործնականում կիրառելու ունակություն	4.7	3.9	0.9
Մասնագիտական էթիկա	4.7	3.4	1.3
Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն	4.7	3.6	1.0

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Բանավոր հաղորդակցություն	4.7	3.6	1.1
Գաղափարները արդյունավետ փոխանցելու ունակություն	4.6	3.3	1.3
Ստեղծագործ մտածելու ունակություն	4.6	3.6	1.0
Ժամանակի և ռեսուրսների կառավարում	4.5	3.1	1.4
Քննադատական մտածողություն	4.5	3.5	1.0
Կոնֆլիկտի լուծում	4.5	3.0	1.5
Թիմային աշխատանք և միջառարկայական թիմում աշխատելու ունակություն	4.5	3.2	1.3
Օտար լեզուների իմացություն	4.5	3.0	1.5
Փորձարկելու և նորարարական հմտություններ	4.5	3.5	1.0
Գրավոր հաղորդակցություն	4.4	3.7	0.7
Սովորել, թե ինչպես սովորել	4.4	3.6	0.8
Ցանցեր ստեղծելու ունակություն	4.4	2.7	1.7
Բանակցային հմտություններ	4.3	2.9	1.3
Ուրիշներին սովորեցնելու ունակություն	4.1	3.4	0.7
Առաջնորդում և ձեռնարկատիրական կարողություն	3.9	2.7	1.2

5.1.3 Շրջանավարտներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ձեռք է բերվել աշխատելու ընթացքում	Ես կարող եմ կատարել դա հետևյալ չափով	Ծրագրի բացը[1]	Կարողությունների բացը[2]
	Միջին գնահատականը				Միջին տարբերությունը	
Փորձարկելու և նորարարական հմտություններ	4.8	3.3	4.2	3.5	1.4	1.3
Բանավոր հաղորդակցություն	4.8	3.5	3.9	3.6	1.3	1.2
Կոնֆլիկտի լուծում	4.8	3.0	4.1	3.6	1.8	1.2
Գաղափարները արդյունավետ փոխանցելու ունակություն	4.6	3.6	4.4	3.7	1.0	0.9
Մասնագիտական էթիկա	4.5	3.6	4.3	3.8	0.9	0.7
Թիմային աշխատանք և միջառարկայական թիմում աշխատելու ունակություն	4.5	3.6	4.5	4.0	0.9	0.5

[1] "Անհրաժեշտություն" և "Ձեռք է բերվել բուհում" փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

[2] "Անհրաժեշտություն" և "Ես կարող եմ կատարել դա հետևյալ չափով" փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Գրավոր հաղորդակցություն	4.5	2.9	4.5	3.7	1.6	0.8
Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն	4.5	3.4	4.3	3.9	1.1	0.6
Տեսությունը գործնականում կիրառելու ունակություն	4.4	2.9	4.4	4.0	1.5	0.4
Ժամանակի և ռեսուրսների կառավարում	4.4	3.0	3.8	3.6	1.4	0.8
Օտար լեզուների իմացություն	4.4	3.4	3.9	3.6	0.9	0.8
Քննադատական մտածողություն	4.3	3.3	3.7	3.6	1.0	0.7
Առաջնորդում և ձեռնարկատիրական կարողություն	4.3	3.3	3.9	3.5	1.0	0.8
Սովորել, թե ինչպես սովորել	4.3	3.4	3.9	3.6	0.9	0.7
Ստեղծագործ մտածելու ունակություն	4.0	2.8	3.9	3.4	1.2	0.6
Բանակցային հմտություններ	4.0	3.3	3.8	3.4	0.8	0.6
Ցանցեր ստեղծելու ունակություն	3.8	3.3	3.8	3.0	0.5	0.8
Ուրիշներին սովորեցնելու ունակություն	3.8	3.6	3.9	3.6	0.1	0.2

5.1.4 Ուսանողներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ես կարող եմ կատարել դա հետևյալ չափով	Ծրագրի բացը[1]	Կարողությունների բացը[2]
	Միջին գնահատականը			Միջին տարբերությունը	
Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն	4.5	3.4	3.5	1.1	1.0
Սովորել, թե ինչպես սովորել	4.4	3.2	3.6	1.2	0.7
Օտար լեզուների իմացություն	4.4	2.8	3.3	1.5	1.1
Թիմային աշխատանք և միջառարկայական թիմում աշխատելու ունակություն	4.4	3.3	3.8	1.0	0.6
Ցանցեր ստեղծելու ունակություն	4.3	2.7	3.0	1.6	1.4
Տեսությունը գործնականում կիրառելու ունակություն	4.3	3.3	3.8	1.0	0.5
Բանավոր հաղորդակցություն	4.3	3.3	3.8	1.0	0.5

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

[2] “Անհրաժեշտություն” և “Ես կարող եմ կատարել դա հետևյալ չափով” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Գաղափարները արդյունավետ փոխանցելու ունակություն	4.2	3.1	3.3	1.0	0.9
Բանակցային հմտություններ	4.2	3.2	3.6	1.0	0.6
Մասնագիտական էթիկա	4.2	3.3	3.4	0.9	0.7
Ժամանակի և ռեսուրսների կառավարում	4.2	2.9	3.3	1.2	0.8
Կոնֆլիկտի լուծում	4.1	3.1	3.6	1.0	0.5
Ստեղծագործ մտածելու ունակություն	4.1	2.9	3.8	1.2	0.3
Փորձարկելու և նորարարական հմտություններ	4.1	3.1	3.5	1.0	0.6
Գրավոր հաղորդակցություն	4.1	3.2	3.6	0.8	0.4
Քննադատական մտածողություն	3.9	3.2	3.4	0.7	0.5
Առաջնորդում և ձեռնարկատիրական կարողություն	3.8	2.8	3.1	1.0	0.7
Ուրիշներին սովորեցնելու ունակություն	3.8	3.0	3.6	0.7	0.2

5.1.5 Ընդհանրական հմտությունների և կարողությունների գնահատման արդյունքները ըստ բոլոր շահակիցների (միջին գնահատական)

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ծրագրի բացը[7]
	Միջին գնահատականը		Միջին տարբերությունը
Փորձարկելու և նորարարական հմտություններ	4.6	3.2	1.4
Բանավոր հաղորդակցություն	4.6	3.2	1.4
Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն	4.5	3.4	1.1
Տեսությունը գործնականում կիրառելու ունակություն	4.5	2.9	1.6
Կոնֆլիկտի լուծում	4.5	2.8	1.7
Գաղափարները արդյունավետ փոխանցելու ունակություն	4.5	2.8	1.7
Սովորել, թե ինչպես սովորել	4.4	3.3	1.1
Ժամանակի և ռեսուրսների կառավարում	4.4	2.7	1.7
Մասնագիտական էթիկա	4.4	2.8	1.6
Թիմային աշխատանք և միջառարկայական թիմում աշխատելու ունակություն	4.4	3.2	1.3

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Օտար լեզուների իմացություն	4.4	3.4	1
Ստեղծագործ մտածելու ունակություն	4.3	3.1	1.2
Գրավոր հաղորդակցություն	4.3	3.1	1.2
Բանակցային հմտություններ	4.2	2.8	1.5
Ցանցեր ստեղծելու ունակություն	4.2	2.7	1.5
Քննադատական մտածողություն	4.1	3.3	0.8
Ուրիշներին սովորեցնելու ունակություն	4	3.1	0.9
Առաջնորդում և ձեռնարկատիրական կարողություն	4	2.6	1.4

5.2 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.2.1 Գործատուներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ձեռք է բերվել աշխատելու ընթացքում	Ծրագրի բացը[1]
	Միջին գնահատականը			Միջին տարբերությունը
Մտահղացում	**4.5**	**2.3**	**3.9**	**2.2**
Շուկայի կարիքները հասկանալու ունակություն	4.6	2.8	4.3	1.8
Ծրագրի արժեքը հասկանալու և ներկայացնելու ունակություն	4.7	2.0	3.9	2.7
Ծրագրի իրականացման կոնտեքստը մեկնաբանելու ունակություն	4.1	2.2	3.6	2.0
Ինքնուրույն ծրագրեր նախաձեռնելու, պաշտպանելու ունակություն	4.4	2.0	3.9	2.4
Նախագծում	**4.1**	**2.0**	**4.1**	**2.2**
Ծրագրի իրականացման համար մեթոդաբանություն մշակելու ունակություն	4.1	2.0	4.3	2.1

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Մեթոդաբանության իրականացման նպատակով գործիքների մշակման ունակություն	4.4	1.9	4.3	2.6
Մեթոդաբանության արդյունավետությունը վերլուծելու ունակություն	4.1	2.2	3.9	2.0
Մեթոդաբանության մշակման ժամանակ առարկայական և միջառարկայական ասպեկտները մեկնաբանելու ունակություն	3.8	1.8	3.9	1.9
Մեթոդաբանության մշակման ժամանակ կանաչ տնտեսության տարրեր ինտեգրելու ունակություն (ռեսուրսախնայողություն, պատասխանատու վերաբերմունք գործատուի գույքին, շրջակա միջավայրին)	3.8	2.0	3.7	1.8
Ժամանակակից տեխնոլոգիաները մեթոդաբանության մշակման գործընթացում կիրառելու ունակություն	4.1	1.8	3.9	2.3
Իրականացում	**4.7**	**2.6**	**4.4**	**2.1**
Ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակություն	4.7	2.3	4.6	2.4
Իրականացման գործընթացը արդյունավետ պլանավորելու ունակություն	4.9	2.4	4.3	2.5
Ըստ պլանների աշխատելու ունակություն	4.6	2.8	4.5	1.8
Ռեսուրսների արդյունավետ կառավարման ունակություն	4.7	2.4	4.3	2.3

Մշակված մեթոդաբանությունը գործնականում կիրառելու ունակություն	4.6	3.0	4.4	1.6
Պլանների արդյունավետ իրականացումն ապահովելու ունակություն	4.6	2.7	4.5	1.9
Գործառնություն	**4.5**	**2.3**	**3.9**	**2.2**
Ընթացիկ գործընթացների արդյունավետությունը գնահատելու ունակություն	4.7	2.2	3.7	2.5
Ոչ համապատասխան գործընթացները դադարեցնելու ունակություն	4.6	2.2	3.6	2.4
Համապատասխանող գործընթացները կատարելագործելու ունակություն	4.4	2.3	3.6	2.1
Գնահատման/մոնիտորինգի գործընթացների կառավարման ունակություն	4.6	2.3	3.4	2.2
Գործընկերներին աջակցելու ունակություն	4.7	2.7	4.5	2.0
Արդյունքները հանրությանը ներկայացնելու ունակություն (առաջխաղացում)	4.3	2.3	4.3	2.0

5.2.2 Դասախոսներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ծրագրի բացը[1]
	Միջին գնահատականը		Միջին տարբերությունը
Մտահղացում	**4.4**	**3.1**	**1.3**
Շուկայի կարիքները հասկանալու ունակություն	4.4	3.0	1.4
Ծրագրի արժեքը հասկանալու և ներկայացնելու ունակություն	4.5	3.2	1.3
Ծրագրի իրականացման կոնտեքստը մեկնաբանելու ունակություն	4.3	3.0	1.3
Ինքնուրույն ծրագրեր նախաձեռնելու, պաշտպանելու ունակություն	4.4	3.1	1.3
Նախագծում	**4.1**	**3.1**	**1.0**
Ծրագրի իրականացման համար մեթոդաբանություն մշակելու ունակություն	4.0	3.2	0.8

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Մեթոդաբանության իրականացման նպատակով գործիքների մշակման ունակություն	4.1	3.1	0.9
Մեթոդաբանության արդյունավետությունը վերլուծելու ունակություն	4.1	2.9	1.1
Մեթոդաբանության մշակման ժամանակ առարկայական և միջառարկայական ասպեկտները մեկնաբանելու ունակություն	4.0	2.9	1.1
Մեթոդաբանության մշակման ժամանակ կանաչ տնտեսության տարրեր ինտեգրելու ունակություն (ռեսուրսախնայողություն, պատասխանատու վերաբերմունք գործատուի գույքին շրջակա միջավայրին)	3.9	3.0	0.9
Ժամանակակից տեխնոլոգիաները մեթոդաբանության մշակման գործընթացում կիրառելու ունակություն	4.3	3.1	1.1
Իրականացում	**4.4**	**3.4**	**1.0**
Ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակություն	4.6	3.4	1.2
Իրականացման գործընթացը արդյունավետ պլանավորելու ունակություն	4.4	3.5	0.9
Ըստ պլանների աշխատելու ունակություն	4.5	3.6	0.8
Ռեսուրսների արդյունավետ կառավարման ունակություն	4.4	3.3	1.1

Մշակված մեթոդաբանությունը գործնականում կիրառելու ունակություն	4.1	3.1	1.0
Պլանների արդյունավետ իրականացումն ապահովելու ունակություն	4.2	3.4	0.8
Գործառնություն	**4.3**	**3.3**	**1.1**
Ընթացիկ գործընթացների արդյունավետությունը գնահատելու ունակություն	4.5	3.1	1.4
Ոչ համապատասխան գործընթացները դադարեցնելու ունակություն	4.1	3.0	1.1
Համապատասխանող գործընթացները կատարելագործելու ունակություն	4.3	3.4	0.8
Գնահատման/մոնիտորինգի գործընթացների կառավարման ունակություն	4.2	3.2	1.0
Գործընկերներին աջակցելու ունակություն	4.3	3.4	1.0
Արդյունքները հանրությանը ներկայացնելու ունակություն (առաջխաղացում)	4.4	3.4	1.0

5.2.3 Շրջանավարտներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ձեռք է բերվել աշխատանքի ընթացքում	Ես կարող եմ կատարել դա հետևյալ հիմա՞	Ծրագրի բացը[1]	Կարողությունների բացը[2]
	Միջին գնահատականը				**Միջին տարբերությունը**	
Մտահղացում	**4.4**	**3.4**	**4.3**	**4.2**	**0.9**	**0.2**
Շուկայի կարիքները հասկանալու ունակություն	4.4	3.0	4.2	4.0	1.4	0.4
Ծրագրի արժեքը հասկանալու և ներկայացնելու ունակություն	4.4	3.6	4.6	4.3	0.9	0.1
Ծրագրի իրականացման կոնտեքստը մեկնաբանելու ունակություն	4.3	3.5	4.0	4.2	0.8	0.1

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

[2] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Ինքնուրույն ծրագրեր նախաձեռնելու, պաշտպանելու ունակություն	4.3	3.7	4.6	4.2	0.6	0.1
Նախագծում	**4.1**	**3.3**	**3.6**	**3.4**	**0.8**	**0.6**
Ծրագրի իրականացման համար մեթոդաբանություն մշակելու ունակություն	4.0	3.0	3.5	3.7	1.0	0.3
Մեթոդաբանության իրականացման նպատակով գործիքների մշակման ունակություն	4.1	3.3	3.8	3.4	0.9	0.7
Մեթոդաբանության արդյունավետությունը վերլուծելու ունակություն	4.0	3.7	3.7	3.4	0.3	0.6
Մեթոդաբանության մշակման ժամանակ առարկայական և միջառարկայական ասպեկտները մեկնաբանելու ունակություն	4.1	3.3	3.2	3.3	0.9	0.9
Մեթոդաբանության մշակման ժամանակ կանաչ տնտեսության տարրեր ինտեգրելու ունակություն (ռեսուրսախնայողություն, պատասխանատու վերաբերմունք գործատուի գույքին, ինչպես նաև շրջակա միջավայրին)	4.0	3.8	4.0	3.8	0.2	0.3
Ժամանակակից տեխնոլոգիաները մեթոդաբանության մշակման գործընթացում կիրառելու ունակություն	4.0	3.2	3.6	3.6	0.8	0.4
Իրականացում	**4.6**	**3.8**	**4.4**	**4.4**	**0.8**	**0.2**
Ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակություն	4.7	3.7	4.4	4.5	1.0	0.2

Իրականացման գործընթացը արդյունավետ պլանավորելու ունակություն	4.4	3.5	4.6	4.5	0.9	-0.1
Ըստ պլանների աշխատելու ունակություն	4.6	3.9	4.5	4.2	0.7	0.4
Ռեսուրսների արդյունավետ կառավարման ունակություն	4.7	4.0	4.4	4.3	0.7	0.4
Մշակված մեթոդաբանությունը գործնականում կիրառելու ունակություն	4.7	3.7	4.1	4.3	1.0	0.4
Պլանների արդյունավետ իրականացումն ապահովելու ունակություն	4.5	3.8	4.5	4.4	0.7	0.1
Գործառնություն	**4.5**	**3.5**	**4.0**	**4.0**	**1.0**	**0.5**
Ընթացիկ գործընթացների արդյունավետությունը գնահատելու ունակություն	4.5	3.6	4.0	4.0	0.9	0.5
Ոչ համապատասխան գործընթացները դադարեցնելու ունակություն	4.6	3.3	4.1	4.2	1.3	0.4
Համապատասխանող գործընթացները կատարելագործելու ունակություն	4.6	3.6	4.3	4.2	1.0	0.4
Գնահատման/մոնիտորինգի գործընթացների կառավարման ունակություն	4.4	3.4	3.6	3.7	1.0	0.8
Գործընկերներին աջակցելու ունակություն	4.6	3.7	4.3	4.2	0.9	0.4
Արդյունքները հանրությանը ներկայացնելու ունակություն (առաջխաղացում)	4.5	3.6	4.0	3.8	0.9	0.7

5.2.4 Ուսանողներ

Հմտություններ և կարողություններ	Անհրաժեշտություն	Ձեռք է բերվել բուհում	Ես կարող եմ կատարել դա հետևյալ չափով	Ծրագրի բացը[1]	Կարողությունների բացը[2]
	Միջին գնահատականը			Միջին տարբերությունը	
Մտահղացում	**4.1**	**3.2**	**3.4**	**0.9**	**0.7**
Շուկայի կարիքները հասկանալու ունակություն	4	3	3.4	1	0.6
Ծրագրի արժեքը հասկանալու և ներկայացնելու ունակություն	4.2	3.2	3.4	1	0.8
Ծրագրի իրականացման կոնտեքստը մեկնաբանելու ունակություն	4	3.3	3.4	0.8	0.6
Ինքնուրույն ծրագրեր նախաձեռնելու, պաշտպանելու ունակություն	4.2	3.2	3.6	1	0.6

[1] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

[2] “Անհրաժեշտություն” և “Ձեռք է բերվել բուհում” փոփոխականների միջին գնահատականների տարբերությունը:

Նախագծում	**4.1**	**3.3**	**3.5**	**0.8**	**0.6**
Ծրագրի իրականացման համար մեթոդաբանություն մշակելու ունակություն	4.2	3.4	3.5	0.8	0.7
Մեթոդաբանության իրականացման նպատակով գործիքների մշակման ունակություն	3.9	3	3.3	0.9	0.6
Մեթոդաբանության արդյունավետությունը վերլուծելու ունակություն	4.2	3.3	3.5	0.9	0.7
Մեթոդաբանության մշակման ժամանակ առարկայական և միջառարկայական ասպեկտները մեկնաբանելու ունակություն	4.1	3.5	3.6	0.6	0.5
Մեթոդաբանության մշակման ժամանակ կանաչ տնտեսության տարրեր ինտեգրելու ունակություն (ռեսուրսախնայողություն, պատասխանատու վերաբերմունք գործատուի գույքին, ինչպես նաև շրջակա միջավայրին)	4.1	3.3	3.5	0.7	0.6
Ժամանակակից տեխնոլոգիաները մեթոդաբանության մշակման գործընթացում կիրառելու ունակություն	4.3	3.3	3.4	1	0.9
Իրականացում	**4.3**	**3.4**	**3.8**	**0.8**	**0.5**
Ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակություն	4.3	3.4	4	0.9	0.3

Իրականացման գործընթացը արդյունավետ պլանավորելու ունակություն	4.4	3.6	3.8	0.8	0.6
Ըստ պլանների աշխատելու ունակություն	4.2	3.6	3.9	0.7	0.3
Ռեսուրսների արդյունավետ կառավարման ունակություն	4.3	3.7	3.8	0.6	0.5
